

ՀԱՆՈՐԴՈՒՄՆԵՐ СООБЩЕНИЯ


Ա. Ե. ԿՐԻՄՍԿԻ

(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

Ա. Գ. ԱՄԻՐՅԱՆ

Անցյալ տարի լրացավ ուկրաինական ականավոր արևելագետ և գրող Ազա-
ֆանգել Եֆիմովիչ Կրիմսկու (1871—1942) ծննդյան հարյուրամյակը:

Իր ավելի քան կեսդարյա գիտական և ստեղծագործական կյանքի ընթաց-
քում Ա. Կրիմսկին սերտորեն կապված
է եղել հայ մշակույթի հետ: Նա սովո-
րել է Արևելյան լեզուների լազարյան
ճեմարանում (1889—1892), որտեղ
դրսևորել է արտակարգ ընդունակու-
թյուններ և հետաքրքրություն արաբա-
գիտության ուսումնասիրության ուղ-
ղությամբ: Լազարյան ճեմարանն ա-
վարտելուց հետո Ա. Կրիմսկին ուսու-
նում է Մոսկվայի համալսարանում
(1892—1896), իսկ այնուհետև ուղարկ-
վում է Մերձավոր Արևելք՝ արաբագի-
տության մեջ կատարելագործվելու հա-
մար: Այն երկու տարիները, որ նա անց-
կացրեց Սիրիայում և Լիբանանում, ա-
վելի ամրապնդեցին նրա նկատ-
մամբ ունեցած նրա սերը և գիտական
իմացությունների ու բանաստեղծական



տպավորությունների հարուստ պաշար տվեցին ողջ կյանքի համար:

1898 թ. սկսվում է Ա. Կրիմսկու մանկավարժական գործունեությունը
Լազարյան ճեմարանում, որը շարունակվում է քսան տարի: Նա եղել է ճեմա-
րանի արաբական բանասիրության և մուսուլմանական Արևելքի պատմության
ամբիոնի պրոֆեսոր, իսկ առանձին շրջաններում նա դասախոսել է նաև արևե-
լագիտական այլ առարկաներ, օրինակ՝ պարսկական ու թուրքական բանասի-
րություն: Ա. Կրիմսկու դասախոսությունները ինչպես բովանդակությամբ,
այնպես էլ իրենց գիտական մակարդակով գրավում էին բազմաթիվ ունկնդիր-
ների և մեծացնում Արևելքով հետաքրքրվող անձանց շրջանակը: Ա. Կրիմսկու
աշակերտների հիշողությունների համաձայն, նրա դասախոսությունները և ու-
սումնական ձեռնարկներն իրենց համար եղել են մի յուրատեսակ «պատուհան
դեպի գիտություն»: Նրա աշակերտներից մի քանիսր, ինչպես օրինակ՝ Բ. Միլ-

լերը, Վ. Մինորսկին, դարձան հայտնի արևելագետներ։ Ա. Կրիմսկու աշակերտների մեջ եղել են նաև շատ հայեր, որոնց թվում նաև՝ Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանը։

Հաղարյան ճեմարանում էլ Ա. Կրիմսկին գրել է իր գիտական աշխատությունների մեծ մասը, որոնք նվիրված են ինչպես արաբական աշխարհին, այնպես էլ պարսիկներին, թուրքերին, իսկ մասամբ նաև սեմական ժողովուրդներին։ Դրանք են. «Պատմություն Պարսկաստանի, նրա գրականության և դերվիշական ուսմունքի» (հատ. 1—2, 1903), «Պատմություն արաբների, նրանց խալիֆայի, նրանց հետագա ճակատագրի և համառոտ ականարկ արաբական գրականության» (1903), «Դասախոսություններ XVI դարի արևելագիտության պատմության» (1903), «Արաբական պոեզիան...» (1906), «Արաբական ձեռագրերի նկարագրության շուրջը...» (1907), «Արաբների և արաբական աշխարհիկ ու հոգևոր գրականության պատմություն» (1911) և բազմաթիվ այլ ուսումնասիրություններ։

Այդ ժամանակ էլ Ա. Կրիմսկին ձեռնամուխ է լինում հայ-պոլոնացական տեքստերի ուսումնասիրությանը, որոնցով նա ղեգղվեց նաև հետագայում։

Ա. Կրիմսկու արևելագիտական հետազոտությունների մեծ մասը հրապարակվել է Հաղարյան ճեմարանի գիտական աշխատությունների «Труды по востокосведению» սերիայով, իսկ հետագայում դրանք վերահրատարակվել են մի քանի անգամ։ Երկար ժամանակ այդ աշխատությունները եղել են գիտության համապատասխան բնագավառում ռուսաց լեզվով միակ ձեռնարկները։ Ինչպես գրում է ակադ. Ի. Կրաչկովսկին, և Տոլստոյը, իր իսկ խոսքերով ասած, «ուսումնասիրել է Ղուրանը՝ ըստ Կրիմսկու»։ Մեծ գրողին է պատկանում նաև գիտնականի «Հաղար ու մեկ զիշերների» գրական պատմության շուրջը» (1900) աշխատանքի մասին գրված շատ գովասանական կարծիքը¹։

Ա. Կրիմսկու աշխատությունները լայն ճանաչում են գտել նաև Հայաստանում։ Հատուկ հետաքրքրություն է առաջ բերել գիտնականի «Մահմեդական աշխարհը ու նրա ապագան» գիրքը, որի մեջ հեղինակը, լուսաբանելով իսլամի անցյալը, մուսուլմանական ժողովուրդների ժամանակակից վիճակը, խոսել է օսմանյան կայսրության այն ռեակցիոն դերի մասին, որ խաղում է նա արարների, պարսիկների և իր հպատակ քրիստոնյա ժողովուրդների ճակատագրում։ Թիֆլիսում հրապարակվող «Մշակ» թերթի 1899 թ. հունվարի 9-ի և ապրիլի 13-ի համարներում ղետեղված են երկու գրախոսություն, որոնք լարձր են գնահատում գիրքը։

Այնքան մեծ էր հայերի հետաքրքրությունը այս գրքի նկատմամբ, որ այն անմիջապես թարգմանվեց հայերեն և հրապարակվեց էջմիածնում 1906 թ.։

Հայագիտության բնագավառում Ա. Կրիմսկու գործունեությունը, ինչպես նաև հայ արևելագետների հետ ունեցած նրա կապերը, դժբախտաբար, դեռևս չեն լուսաբանվել։ Այս հանգամանքը որոշ չափով պայմանավորված է եղել նրանով, որ աշխատելով Լուդարյան ճեմարանում և ունեն օր շփվելով իր գործընկերների, այդ թվում նաև հայ արևելագետների հետ, Ա. Կրիմսկին այդ կապերի մասին գրավոր վկայություններ չի թողել։ Այնուամենայնիվ, գիտնականի արխիվում, որ գտնվում է ՈւՍՍՀ գիտությունների ակադեմիայի կենտրոնում՝

¹ См. И. Ю. Крачковский, Академик АН УССР А. Е. Крымский (к 70-летию со дня рождения), «Известия» АН СССР (отд. литературы и языка), 1941, № 3, էջ 127.

կան գիտական դրադարանի ձեռագրերի բաժնում, պահպանվել են ինչ-ինչ նյութեր, որոնք լույս են սփռում նաև նրա գիտական հետաքրքրությունների այս կողմի վրա: Դրանց մեջ է հայտնի լեզվաբան, դրականագետ և արևելագետ, Հաղարյան Ճեմարանի պրոֆեսոր Լևոն Մսերյանցի նամակը (19 մայիսի 1909): Դատելով սրանից, երկու գիտնականների միջև մշտապես կարծիքների փոխանակություն է եղել արևելագիտության ամենաբաղձազան խնդիրների վերաբերյալ: Հետաքրքրական է հետգրությունը, որի մեջ կարդում ենք. «Կցում եմ համբուրգյան կոնգրեսում (1909) հայոց լեզվի մեջ ուրարտական տարրերի մասին իմ զեկուցման առիթով եղած վիճաբանությունների սույն *separatum*-ը: Տեղավորեցեք այս թերթիկը Ձեզ մոտ գանվող իմ „Так называемые „ванские“ (урартские) суффиксы и лексические элементы в армянском языке» (Մ., 1902) աշխատանքի մեջ»²: Սա, անկասկած, կարող էր հասցեագրվել միայն այն անձին, որը իրազեկ էր հայոց լեզվի և նրա բարբառների պատմության հարցերին:

Եվ իսկապես, պոլիդլոտ Ա. Կրիմսկին, որն ազատ կերպով տիրապետում էր աշխարհի բաղձաթիվ ժողովուրդների լեզուների, գիտեր նաև հայերեն՝ թե՛ աշխարհաբար, և թե՛ գրաբար: Այդ մասին գիտնականի ձեռագրերում կա ևս մի վկայություն: Դա Հաղարյան Ճեմարանի ուսանող Պյոտր Սորոկինի (Պետրոս Սառոգին — ինչպես կոչում է իրեն ինքը հեղինակը) Ազաթանգեղոսի «Հայոց պատմության» առաջին մասի ուսերեն թարգմանության վերաբերյալ գրած նրա կարծիքն է: Թարգմանությունը՝ արված «Պատմության» 1835 թ. վենետիկյան հրատարակությունից, բառարանի և դլոսսարիումի (հին տեքստերի բացատրական բառարան) հետ մեկտեղ իրենից ներկայացնում է կուրսային աշխատանք, որը կարծիքի էր տրվել Ա. Կրիմսկուն, ըստ երևույթին, իբրև այդ բնագավառի խորագիտակ անձի: Ա. Կրիմսկու կարծիքը՝ զետեղված մեկ թերթի վրա, ոչ միայն ցույց է տալիս համապատասխան շրջանի հայոց պատմության և պատմագրության մեջ գիտնականի լավատեղյակությունը, այլև խոսում գրաբարի առանձնահատկությունների վերաբերյալ նրա գիտելիքների մասին: Ահա մի քաղվածք այդ կարծիքից. «Չնայած այն բանին, որ բնիկ հային անգամ հեշտ չի հաջողվում վերարտադրել Ազաթանգեղոսի հայերեն տեքստի ճշգրիտ թարգմանությունը, Սորոկինը, շնորհիվ իր առաջադրանքի նկատմամբ ունեցած ուշադիր վերաբերմունքի, աշխատանքը կատարել է բավարար չափով: Մի քանի անճշտություններ, որոնք ներս են սպրդել նրա աշխատանքում, սերտորեն բխում են, նախ և առաջ, այն հրատարակության թերություններից, որը, ավելի լավը չունենալու պատճառով, օգտագործվել է, և երկրորդ, որ գլխավորն է, խոսքի բաղմերանգությունից, զուտ արևելյան գունագեղությունից, հոմանիշական արտահայտությունների առատությունից և տվյալ բնագրի հայկական խոսքի յուրօրինակ դարձվածքներից»³:


Գիտնականի մյուս ձեռագրերում ևս կան կարծիքներ հայ հին պատմիչների, աղբյուրագիտական նշանակություն ունեցող նրանց աշխատությունների մասին:

Ա. Կրիմսկին բաղձակողմանիորեն օժտված անձնավորություն էր: Լինելով բանասիրության բնագավառում իսկապես համակողմանի գիտելիքների

² ՈւՍՍՀ ԳԱ կենտրոնական գիտական գրադարանի ձեռագրերի բաժին. Ա. Կրիմսկու ֆոնդ, № 1, 25557:

³ Նույն տեղում:

տեր գիտնական, նա նաև տաղանդավոր բանաստեղծ էր, արձակագիր և թարգմանիչ, որը հարստացրել է ուկրաինական գրականությունը մի շարք բարձր գեղարվեստական ստեղծագործություններով: «...Ա. Ե. Կրիմսկու բազմակողմանի գործունեության բոլոր գծերը հենց սկզբից ընթացել են զուգահեռաբար,— գրել է նրա մասին ակադ. Ի. Կրաչկովսկին,— միշտ նա եղել է ոչ միայն գիտնական, այլ նաև բանաստեղծ և գրող, ոչ միայն արևելագետ, այլ նաև սլավոնագետ և ուկրաինագետ»⁴:



Ա. Կրիմսկու գրքի վերաբերյալ «Մշակում» տպագրված գրախոսությունը:

Ա. Կրիմսկու գրչին են պատկանում «Անդրեյ Լագովսկի» վեպը, «Պատմըվածքներ և էսքիզներ ուկրաինական կյանքից», «Պոեզիա» ժողովածուն և «Արմավենու ճյուղեր» բանաստեղծությունների ժողովածուները, որոնք ներշնչված էին Արևելքից ստացած տպավորություններով: Ծանոթությունը Կովկասի և Անդրկովկասի հետ նույնպես արտացոլում զտավ նրա պոեզիայում: Ուշադրության արժանի է մի բանաստեղծություն, որը հրապարակվել է Տարաս Շևչենկոյի հոբելյանին նվիրված ուկրաինական ամսանախներում (1910, 1912 թթ.): Նրա մեջ պատմվում է Կովկասում Կորզարի հոբելյանի տոնակատարության մասին. «В дальній Кавказині, в краї чужому...»:

⁴ И. Ю. Крачковский, Академик АН УССР А. Е. Крымский.

Ա. Կրիմսկին մտերիմ էր ուկրաինական գրականության այնպիսի ազանավոր ներկայացուցիչների հետ, ինչպիսիք են Ի. Ֆրանկոն, Մ. Կոցյուրինսկին, Գիտնականը հատկապես սերտ բարեկամական հարաբերություններ ունենալիս Ուկրաինայի հետ: Նա 1903 թ. ուղեկցել է հիվանդ բանաստեղծուհուն Թիֆլիս կատարծ առաջին ուղևորության ժամանակ: Պարզված է նաև, որ Կրիմսկին ուղարկում էր Լ. Ուկրաինային (որը հետաքրքրվում էր Արեւիկի ժողովուրդների պատմության մասին եղած գրականությամբ) արևելագիտական աշխատություններ, այդ թվում նաև Լազարյան ճեմարանի հրատարակությունները⁵:

Հավանաբար հենց Ա. Կրիմսկին է Լեւյա Ուկրաինայի մեջ ներշնչել հետաքրքրություն դնել հայ և վրաց գրականությունները: Պատահական չէ, որ բանաստեղծուհին նույն 1903 թ. դեկտեմբերի 2-ի նամակով հատկապես նրան է փոստանքով հայտնում, թե դադարեց գոյություն ունենալուց «Кавказский вестник»-ը, որտեղ տպագրվում էին հայ և վրաց գրականություններից թարգմանություններ, նաև ավելացնելով, որ «ուսերեն թարգմանությամբ վրաց և հայ արձակի ընթերցումը... լավատեսական խորհրդածություններ է առաջացնում իմ մեջ մեր գրականության վերաբերյալ»⁶: Ըստ երևութի, սա մի երկախոսություն էր, որ սկսված էր դեռևս նախորդ զրույցներում ու նամակներում:

Լազարյան ճեմարանում Ա. Կրիմսկու գիտա-մանկավարժական գործունեությունը շարունակվեց մինչև 1918 թ.: Երբ Հոկտեմբերյան մեծ հեղափոխության հաղթանակից հետո, նոր ժամանակի պահանջներին համապատասխան, դրվեց ճեմարանի վերակառուցման հարցը, Ա. Կրիմսկին այս հարցի քննարկման գործում ակտիվ մասնակցություն ցուցաբերեց: Ճեմարանի պրոֆեսորներ Կ. Կոստանյանի, Ա. Ներսիսյանի, Լ. Մսերյանցի, հայ մշակույթի գործիչներ Վ. Տերյանի, Պ. Մակինցյանի և ուրիշների հետ մեկտեղ նա ընտրվում է 1918 թ. հիմնադրված «Գիտական հիմունքով հայագիտության դասավանդման» հանձնաժողովի անդամ, որի նախագահն էր Ն. Մառը:

1918 թ. Կիև տեղափոխվելուց հետո Ա. Կրիմսկին դարձավ Ուկրաինական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի կադմակերպիչներից մեկը, ակադեմիա, որի անդամն ու առաջին «մշտական քարտուղարը» շուտով ընտրվեց ինքը: Այդ ժամանակ գիտնականի ուղադրությունը հիմնականում կենտրոնացնում է ուկրաինագիտության վրա, բայց առաջվա պես նա եռանդագին շարունակում է աշխատել նաև արևելագիտության մարդում: Այդ տարիներին նրա ղեկավարությամբ էր աշխատում ՈւՍՍՀ գիտությունների ակադեմիայի թուրքագիտական հանձնաժողովը, որի ամենաառաջնակարգ խնդիրն էր ուսումնասիրել XVI—XVII դդ. Ուկրաինայում ապրած հայերի թուրքալեզու գրչությունը, իսկ մասնավորապես Կամենեց-Պոդոլսկի հայկական դատարանի փաստաթղթերը, որոնք պատմական և իրավագիտական կարևորագույն աղբյուրներ էին: Այդ տեքստերից ստացած տեղեկությունները գիտնականը հրապարակեց իր «Թուր-

⁵ См. С. Даронян, Леся Украинка и Кавказ. «Литературная Армения», 1971, № 5, էջ 91:

⁶ Леся Украинка, Собр. соч., в четырех томах, т. IV, ГИХЛ, М., 1957, էջ 433:

քերը, նրանց լեզուներն ու գրականությունները» (1930) ուկրաիներեն տպագրված էնցիկլոպեդիկ աշխատության մեջ:

Կիևում Ա. Կրիմսկին շարունակում է կապ պահպանել հայ արևելագետների, մասնավորապես Կ. Մելիք-Օհանջանյանի հետ, որն աշխատելով հին իրանական կրոնին նվիրված իր հետազոտության վրա, օգտվում էր Կիևի համալսարանի իր նախկին ուսուցչի կողմից ղեկավարվող արևելյան մատենագրության և մշակույթի ամբիոնի ցուցումներից:

Այս ամենին անհրաժեշտ է ավելացնել, որ Ա. Կրիմսկին եղել է հայոց լեզվի պրոպագանդիստը Ուկրաինայում, նա ուկրաինական մշակույթի ավագ սերնդի այն գործիչներից մեկն էր, որոնք Պավլո Տիշինայի մեջ հայոց լեզվի նկատմամբ հետաքրքրություն արթնացրին: Այս առումով նշանակալից է 1930 թ. ամռանը Կիևում պատկառելի գիտնականի և դեռևս երիտասարդ բանաստեղծի մի հիշարժան հանդիպումը, որի մասին ուկրաինական պրեսանագետ Սլեգ Կիլիմնիկը հետևյալն է պատմում. «Ազաֆանգել Եֆիմովիչի բնակարանում... Ես տեսա Պավլո Գրիգորևիչ Տիշինային... Տանտիրոջ և հյուրի միջև սկսվեց խոսակցություն ինձ անհասկանալի մի լեզվով: Երբ Պավլո Գրիգորևիչը զնաց, և ես հարցրեցի, թե ինչ լեզվով էին նրանք խոսում, Ազաֆանգել Եֆիմովիչը ասաց. «Պավլո Գրիգորևիչը կատարելագործում է արևելյան լեզուների իր իմացությունը: Ես նրա հետ խոսում էի հայերեն և թուրքերեն: Մեր բանաստեղծը պատրաստվում է թարգմանել արևելյան հեղինակներին, իսկ ես դրանով զբաղվում եմ վաղուց: Նա ինչ-ինչ բաների մասին խորհրդակցեց ինձ հետ, ստուգեց հայերենից և թուրքերենից ունեցած իր գիտելիքները...»:

Ա. Կրիմսկու լայն և բազմակողմանի գործունեությունը բերեց նրան արժանի փառք և մեծ հեղինակություն ինչպես Սովետական Միության, այնպես էլ արտասահմանի գիտական շրջանակներում: Գիտնականի արաբագիտությամբ, Պարսկաստանի, Հաբեշտանի և այլ երկրների պատմությանը նվիրված աշխատությունները թարգմանվել են աշխարհի շատ ժողովուրդների լեզուներով: 1940 թ. բանասիրության բնագավառում Ա. Կրիմսկու մատուցած ծառայությունները գնահատվեցին Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով և գիտության վաստակավոր գործչի կոչումով, իսկ 1941 թ. նշվեցին նրա ծննդյան 70, գիտական-գրական գործունեության 50 և մանկավարժական գործունեության 40-ամյակները: Այլոց թվում հանդես եկավ նաև Կիևի համալսարանի պրոֆեսոր, արար Տ. Գ. Կեղման. հեղինակը արաբերեն բանաստեղծություններ ջերմորեն շնորհակալություն էր հայտնում հոբելյարին, արաբ ժողովրդի նկատմամբ ունեցած սիրո, նրա կյանքի, պատմության ու արվեստի ուսումնասիրության մեջ խորամուխ լինելու համար:

Ա. Ե. Կրիմսկու աշխատությունները մեծ դեր են խաղացել Սովետական Միության ժողովուրդների, Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների մերձեցման գործում: Նշանավոր գիտնականի անունը արժանի է պատվավոր տեղ գրավելու նաև հայկական մշակույթը հետազոտողների և գնահատողների շարքում:

7 О. Килимник, Незабутні зустрічі. «Співець нового світу. Спогади про Павла Тичинчу», Київ, 1971, էջ 108—109:

А. Е. КРЫМСКИЙ

(К 100-летию со дня рождения)

С. Г. АМИРЯН

(Резюме)

Выдающийся украинский востоковед и писатель Агафангел Ефимович Крымский (1871—1942) на протяжении всей своей научной жизни был тесно связан с армянской культурой. Он учился в Лазаревском институте восточных языков (1889—1892), где проявил глубокий интерес и незаурядные способности в области арабистики. По окончании курса Московского университета (1892—1896) и двухлетнего пребывания в Сирии и Ливане А. Крымский вернулся в Лазаревский институт и в течение двадцати лет был профессором института на кафедре арабской словесности и истории мусульманского Востока. Труды А. Крымского, посвященные арабскому миру, персам, туркам, а отчасти и семитским народам, печатались в серии научных трудов Лазаревского института «Труды по востоковедению». Они нашли широкое признание и в Армении. «Книга А. Крымского «Мусульманство и его будущность» в 1906 г. была переведена на армянский язык.

В своих научных интересах А. Крымский уделял внимание и арменистике, в частности изучению армяно-половецких текстов. Будучи полиглотом, он знал и армянский язык—ашхарабар и грабар.

А. Крымский был и талантливым писателем, поэтом и переводчиком. Среди его литературных друзей были Леся Украинка, а позднее—Павло Тычина, которым он привил интерес к армянской литературе.